

- Եւ արմիք առ ափն ծիփանքը:
 Եւ ջուրս հոսանաց բազմաց ըմպելով
 Զանամոքելի ազուծիւնն 'ի խորոց զչայսի,
 395 Եւ առաւելութեամբ արբեցուծեանն ամբոխի
 Խորտակել զկապանսն և փախել Կամելով:
 Եւ անդէն 'ի ներքս քարէն և երկուցեալ կայ
 (մայ,
 Եւ ընդ աւազուտ դրունսն ո՛չ անցանէ,
 Այլ անդրէն յինչ որսայսեալ անկանի:
 400 Որպէս զաղախին կաւեալ զհէրաց՝
 Զի անկանի երկիւղիւ:
 885 Այլ ո՛վ մերձք 'ի հեռուստ հաստատուն երաւ,
 [գութեամբ,
 Որ ամենից ես դիտել և դժուարացիւտ
 (մասցեալ,
 Եւ ամենից ունել՝ և ըմբռնել ո՛չ կամեցեալ:
 Քանզի բնաւից գոյով անդիտելի՝ եղբր հաւ,
 [նուրց տեսանելի,
 Յորոց ներգործեացն՝ որպէս զի ամենից 'ի քեզ
 (հայել,
 Զի որքան զու զմեծութիւն էութեանդ
 Անհաս գերազոյութեամբ տմբոփեցեր,
 890 Այլ քան ներգործութեամբ տեսանելի
 Մեզ արարեր աստուածայնովք, հրեշտակայ,
 [նովք...
 896 Եւ ամենայն աշխարհ առ այժմ երեսնցելովս,
 Եւ որով նախ և յետ սորա (թէ կամիս)....:

Գալով բուն հեղինարանութեան հանգամաւ,
 նացն, կամաւ չէնք ուղեր երկայնել, այլ կարծ
 խօսքով վերջացնել որ ընթերցողաց շատ տեղ
 անհասկանալի ըլլալով՝ ձանձրոյն զի ասոռաւ,
 ակնք: Թողլով այն ամեն առումներն բայց,
 խնդրոց, բառից, և այլն, որոնք աւելի քերական

նութեանն պատկանին քան թէ մեր այս համառօտ
 խօսքին ու յօգուածին, մէկ խորշիկի ու հական
 պակասութիւն մ'ալ եթէ կայ՝ այս է որ աւելորդ
 տեղ նախադրութիւններ դնելով անհասկանալի
 կ'ընեն խօսքը, զոր մեզմէ առաջ այլք, մանաւանդ
 Երընկացին իր քերականական լուծման մէջ կ'աւանդե-
 և ահա այս է իր բռածը. «Նախադրու-
 թիւնք՝ առաջադրութիւն ասի, որ ըստ ինքեան
 ոչ ինչ նշանակեն, բայց զնին նախերգանք այլոց
 մասանք. զի յորժամ զբանն շոխացուցանել (այս
 է՝ երկայնել) կամիմք, հէգ ինչ փոքրիկ նախ աւա-
 ռալի գասեմք. որ ոչինչ ունի խորհուրդ՝ բայց
 միայն դժոխալուր առնել զբանն » և ասոր օրիւ-
 նակ անթիւ են՝ ինչպէս արքայայեալ, լորայեալ, լորտեալ,
 լորտեալ, և համառօտ ըսելով՝ այն բառերն որ
 տծանցեալ են այս մասնիկներով՝ արք, քայ, մալ,
 էնի, լոր, լոր, քալ, յար, արք, հալ, Եր, քար,
 լիք, ասոնք ամենքն խորթ, ու ինչպէս քերականն
 ըսաւ՝ դժոխալուր հեղինարանութիւնք են. վասն
 զի թէպէտ 'ի յոյնն վայելուչ և սեպական գործ-
 ածութիւն է, սակայն 'ի մեզ անցնելով՝ կ'ըլ-
 ւայ անլեւել խորթութիւն:

Դիտմամբ համարձակեցանք աս ըսելու, որ թէ
 հիմա ալ գտնուին ոմանք այսպիսի բառից գործա-
 ծողք. դիտնան միայն՝ որ թրակացւոյն քերական
 նութեան և անոր հետևողաց գիւսն է այն, որ
 ընդուն գիւրացնելու ու պարզելու մտքով՝ կոր-
 ծանան հասուցան և անոր շարունակութեամբ
 արմատացան մեր բարբառոյն մէջ շատ մը խոր-
 թութիւններ ու օտարաբանութիւններ՝ զոր զը-
 ժուարին ու գրեթէ անկարելի է մաքրել:

ԱՌԱՄՔ ԱԶԳԱՅԻՆՔ

- Ահլը շատ է քան զմահը:
 — Ամեն մարդ որ ծնաւ, պիտի քաշէ ամեն
 մարա:
 — Ամեն ջուր գերան չի բերեր:
 — Այծէն կ'ըլլայ. կովէն կ'ըլլայ, մակարդուի
 մածուն կ'ըլլայ:
 Այծը ուլուց յայտնի կ'ըլլայ, աղէկ մանուկն
 յօրոյ:
 — Այսօր աշխարհ, վաղ աշխարհ:
 — Անհրնար մարդի լեղուն երկար կը լինի:
 — Աշխարհքս գմակ, մէջի մարդը գմանկ:
 — Ապրիլ կայ երկամ է, ապրիլ կայ արծամ է:
 — Արիւնը արիւնով չեն լուանար:
 — Բանը բանելով, ձա՛մբան քալելով:
 — Բանը կը հանէ սրտին գամը:

- Բարձր բարձր տուններ, մէջը անթի շուներ:
 — Գիւղացին որ չիտնայ, չարբի պէտք է օր
 զիմանայ:
 — Դուն քուն, բաղդդ արթուն:
 — Երաշի մէջ սովածը հաց կը տեսնայ, ծա-
 րաւը չուր:
 — Զարարի կիսիցը յետ դառնալը խն է:
 — Էն ջրիցը վախցիր, որ ոչ թշուամ է ոչ խըշ-
 շուամ:
 — Լաւ լիւզորդը, վերջը ջրի փայն է:
 — Լեռին ճար կայ, Նեղին ճար չիկայ:
 — Թեւալիքին՝ մէկ խօսքը, անխելքին՝ հազար
 խօսքը:
 — Խե աղբիկը խե հարս կ'ըլլայ, խե հարսը
 խե տանախիկն:

— Մտաւ որ վար ընկնի, կտցնաւ որը կը շատ
նայ:
— Ծով կ'երթաս ծարաւ կու գաս:
— Հարուստը մեռնի՝ գեղն երկրայ, աղքատն
մեռնի՝ մարդ չիմանայ:
— Հեռի տեղի հացը մեծ կը թուի:
— Զուի գողն ու ձիւն գողն մին է:
— Դուկն ու միւր մի պղնձումը չեփուիր:
— Մարդիս աչքը գուրս գայ լաւ է, քան թէ
տնունը:
— Մարդ կայ որ հազար կ'աժէ, հազար կայ
որ մէկ չաժէր:
— Մի մարդի փողեղն որ աւելնան, տանը տիւ-
ները ծուռ կ'երևան:
— Մէկ խելքը լաւ է, երկուսը եւ առտուէ:
— Մուկը իրեն ծակին դիմաց առիւծ է:
— Ողբերը քանի կան, մեռելներուն բաժին
չկայ:
— Որ գնտա մի երկիր, տեսնաս որ ամենքն
կոյր են, գու ալ աչք խփի:
— Այլ որ փքանայ, շուտով չքանայ:
— Որքին հաց տուող չի ընիր, խրատ տուող
շատ կը ընիր:

— Ուրախութենէ մազն կ'երկրնայ, տրամու-
թենէ եղունգն:
— Ուրաքն իր կոթը չի տալէր:
— Զար՝ սրտէն, չարիքն՝ ըղէղէն:
— Զափաւորն է զարդ, եւելին թակարդ:
— Զուրը գնում է, աւաղն է մնում:
— Սուտը կ'ոտանաւորի բայց չէր թար:
— Ստակ կռնակ, կը քանայ ամեն կողպակ:
— Տարի կայ աւուր է պահում, որ կայ տա-
րուանը:
— Տեսնես որ Զուրն քեզ հետ չի գալի, գու
նմա հետեւիր:
— Տղաք մեծցաւ, քեզի մեծ ցաւ:
— Փխ ըսողին, լաւ լսողին:
— Քաղցած շունը վաղուէ սրունքներ կ'ունե-
նայ:
— Քարը քարին քրտն՝ կրակ գուրս կը գայ:
— Քիչ զուրցէ աղէկ զուրցէ:
— Քիչ էին մըտել գանից, մէկն ալ ընկաւ եր-
գզեղի:
— Օձը իւր շապիկը կը փոխէ, բայց բնութիւնը
չի փոխեր:

ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆՔ

ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՏԻԻՄՈՅԻ ՊՐԱԺՈՒՆ ԳԻՐԿՈՍՄ.
Թարգմ. Մ. ՄԱՍՈՒՐԵԱՆ: Զմիւռնիա, Տպա-
գրութիւն Տէտէեան:

ԸՆԴԱՐՁԱԿ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՈՐԱՅՈՑՑ
1875 թուին. Գրէյ ԵՐԵՄԻԱ ՔԱՇԱՆԱՑ: Կ-
Պօլս, Տպագրութիւն Զարդարեան:

ՀԱՅԱՐ ԵՒ ՄԻ ԱՌԱԿԱՆՈՐ ԲԱՆՔ. Գրէյ
ԳԱՐԵԻՆԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՍՍ ԱՅՎԱՅԵԱՆ: Կ-Պօ-
լս, Տպագրութիւն Արամեան:

Ֆ. ԴԱՆԼ. ԳՕՆԱՐՈ ՃԵՐՄԱԿ ՎԱՐԴ. Թարգմ.
Ե. Մ. Ս: Զմիւռնիա, Տպագրութիւն Տէ-
տէեան:

ՀՆՈՑ ԵՒ ՆՈՐՈՑ, Գրէյ ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԳԱՅՑ
ՍՐՈՒԱՆՑԵԱՆ: Կ-Պօլս, Տպագրութիւն Ե.
Մ. Տնտեսեան:

Ի. ՄԱՐԿԵԼԻ ԱՄՈՒՐԻԻ ՄԸ ԵՐԱԶՆԵՐԸ
ԿԱՄ ՍՐՏԻ ԳԻՐԻՔ ՄԸ. Թարգմ. Մ. ՄԱՍՈՒ-
ՐԵԱՆ: Զմիւռնիա, Տպագրութիւն Տէտէեան:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՏԻԻՄՈՅԻ ԺՈՂԷՅ ՊԱՆԱՄՈ:
Զմիւռնիա, Տպագրութիւն Տէտէեան:

ՀԱՄԱՌՈՑ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ԲՆԱԿԱՆ,
ԳԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ. Գրէյ Գ. Ս.
ԽԱՊԱՅԵԱՆ: Երուսաղէմ, Տպագրութիւն Սըրոյ
Յակոբեանց:

ԴԱՍՍԱԳԻՐՔ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԶԱՅՆԱԳՐՈՒ-
ԹԵԱՆ ՀԱՅՈՑ. Գրէյ Ն. Ս. ԹԱՇՏԵԱՆ: Տը-
պագրութիւն Էջմիածնի:

ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ Ի ՊԷՏՍ ԱԶ-
ԳԱՅԻՆ ՎԱՐՃԱՐԱՆԱՅ. Գրէյ Դ. ԱՍԱԿ-
ՆԵԱՆ: Կ-Պօլս, Տպագրութիւն Արամեան:

ՔՆՆԱԿԱՆ ԿՐՈՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԸՆԴԱՐ.
ԶԱԿ. Գրէյ Տ. ԱՆՃԱԿ ՔԱՇԱՆԱՑ ՍԱՐԳՍԵԱՆ:
Կ-Պօլս, Տպագրութիւն Ե. Մ. Տնտեսեան:

ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. Գրէյ Ա. Ա. ՍՈՒ-
ՐԵՆԵԱՆ: Կ-Պօլս, Տպագրութիւն Արամեան:

ԳՐՈՑ ՈՒ ԲՐՈՑ ԵՒ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ
ԿԱՄ ՄՀԵՐԻ ԴՈՒՌ. Գրէյ ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐ.
ԴԱՊԱՑ ՍՐՈՒԱՆՑԵԱՆ: Կ-Պօլս, Տպագրու-
թիւն Ե. Մ. Տնտեսեան:

ՏՈՂԻԿԻ Ի Հ. Ս. ԱՆՃԱՅԵԱՆԷ: Կ-Պօլս, Տը-
պագրութիւն Արամեան: